բական խուլիան Ռզովսկի ձեռքով նորոգվել է։ Այս հոգեւորականը եկել է Գալիցիայից, Լվովի Նահանգից, Զեմկովսկի գաւառի Եպոլպայ քաղաքից։—

Տապանագրերի արձանագրութիւնը. «Սա է տապան ոսկրված հոգի մեծ խաթունին կողմանցուն, պարան Ցակոբին, Մահտեսի Մինասին որդուն, Եպոլովայ քաղաքին երեսփոխանին, յանկնաւոր Քհ. թվ. ռձիզ-ին ամս ապրելի գ. օրն ուրբաթ»

«Սա է տապան պարան Ցակոբին Մահտեսի Մինասի որդուն Եպոլովու երեսփոխանին յանկուցեալ ի Քհ. թ. ռձիզին յունիսի իբ»

Ինչպես երեւում է ամուսին այրը տասը տարուց յետոյ է վախճանվել կնոջից. ասում են, որ այս զամբիկեանների եկեղեցին չնված է վերոգրեալ պարան Ցակոբի փողերով, որովհետեւ եղել է շատ հարուստ և անորդի և իր հարստութիւնը կտակել է եկեղեցուն, որ սկզբում պատկանելիս է եղել Հայոց։ Չը կարողացայ իմանալ, թէ ինչպես է անցել պապականների ձեռքը։ Ոմանք ասում են, թէ այդ գեղեցիկ մատեանները ին չնեղ այս եկեղեցին և մէջը թաղվել, վերջինը ասելի է հաւանական, որովհետեւ, եկեղեցու թէ գրքի և թէ ներսի զարդը՝ բոլորը հայկական է, վարպապի ոչ մէկ եկեղեցիներին չէ նմանում, եկեղեցին շատ մեծ է. գտնվում է Քրեստա փողոցում, այնքան երկար է որ սեղանի կողմն դուրս է գնում միւս փողոցը, որը կոչվում է «Մաթրա Մինասոյ». Որովհետեւ անցեալ տարի ես չը կարողացայ ոչ «կլոզ»-ը շարամաթերին գտնել և ոչ անձամբ գնալ այն եկեղեցին հետազօտելուն,—իմ առաջին ցանկութիւնն էր, որ այս տարի անպատճառ բոլորն անձամբ տեսնեի. այս մտքով ես վեր առայ սաղարեանցին երեսասարդ պ. Պարգիս Զիլեանցին և գնացինք եկեղեցու երեսփոխանի հետ մոտը մեծ ուաձարը, որը իսկոյն նկարարվեցաւ այս օտար ազիսարոնում հայոց մայր եկեղեցու անգալին մեծութեամբ.—իմ առաջին հոգսը եղաւ գտնել գերեզմանները և չատ դժուարութեամբ դուրս գալ վերնագրերը։ Ցետոյ սկսեցինք մեր խուզարկութիւնը. առաջ մոտը ազգականաց խորանը. բոլորը հայոց ձեւով էր չնչված. խորանի եռեկ փոքր ներքնադռնով մտանք միւս անգալին կամարակալ դահլիճը, որի պատերի վրա նկարված էին չատ եպիսկոպոսների պատկերներ, որոնց թագն և գաւազանը հայկականի նման էին. կարգալի դրանց անունները. չատերը լատին էին, ոմանք լեհացի, բայց երկուսի ներքնագիրը ցոյց տուեց, որ պէտք է հայեր լինեն. մէկն գրած էր Պօղոս իսկ միւսը՝ Օնանէս.—Ինձ այս դահլիճի համար ասացին, որ Տիրվիտները այստեղ էին տանիում իրանց զոհերին, չատ հաւանական է, որովհետեւ զարհուրելի մի չինութիւն է։ Ցետոյ դուրս եկանք այս դժոխքից, մտանք միւս խորանը որտեղ քահանաները զգեստաւորվում են, մեծ հայելիներով զարդարված էր, նստարանները գեղեցիկ էին. Ակսեցինք քննել սեղանը. սկզբում եղել է հայոց կերպ, յետոյ փոքր ցանցրել են, բայց էլի բարձր է միւս եկեղեցիներից։

Այս եկեղեցում կար մէկ գեղեցիկ դրօշակ, հարցրի՝ սա ինչ է։ Պատասխանեցին կոչկարարների դրօշակն է և այս եկեղեցին այժմ անուանվում է կոչկարարների եկեղեցի։ Ահա թէ ինչ պատմեցաւ. Կրակով քարոզում լինում են երկու եղբայրներ իշխան (КНЯЗЬ) և նարուտ կալուածատէր. սրանք լինում են օրենված կոչկարարների համքարում։ Երկու եղբայրներից, մէկը Կրիսպիան անուանով իսկ միւս Կրիսպիանին, լինելով անժառանգ, իրանց բոլոր հարստութիւնը և կալուածները կտակում են բոլոր կոչկարարները։ Սրանք կարողանում երկար ժամանակ կառավարել այն անգալին կարգադրութիւնը, վատնում են, սկսում են սասարկ չարչարել տարեկներին, վերջապէս մեծ մաղը վատնվում է։ Այս և պատճառ, որ կոչկարարները հոգեհանգիստ են կատարում երկու եղբայր Կրիսպին Կրիսպիանին համար։ Վարչվում այն օրը բոլոր կոչկարարները կողպում են, ֆիրանով, սպիտակ փողպատով և ձեռնոցներով ժողովվում են այս եկեղեցում և փառաւոր հոգեհանգիստ են կատարում, յետոյ ամբողջ օր լինում է սրանց համար մեծ տօնախմբութիւն։ Զարմանալի է, իշխան Կրիսպիանների կտակած հարստութեան նշոյլը անգամ չէ մնացել, բայց Նրանց յիշատակն գարձեալ սուրբ են պահանում։

Հ. Աբովեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆՑ

3 յունիսի

Կարդում ենք ձեր պատուական լրագրի մէջ, որ մեր Թիւրքիայեան կայ եղբայրները հացի մասին այնպէս նեղ դրութեան մէջ են ընկած, որ անգամ իրանց հարազատ որդոց մարմնով են յագեցնում իրենց սովածութիւնը, վատնորոյ այսպիսի մի նեղ մէջքցում չէ կարող գտնվել մի մարդ, որ իրեն սիրան ապառաւանցնէ և իրեն կարեաց չափ օգնութիւն չը հասցնէ։ Մենք մի քանի անձինք հաւաքելով մեր մէջ իւրաքանչիւրի կամաց չափով ընդամենը տասն և չորս բուրլի, որ նամակիս հետ ուղարկելով, խնդրում ենք հասուցանել մեր սովամահ եղբայրներին, և ապագրէլ նուիրատուաց անուանները ձեր լրագրի մի անկիւնում Ա. Պ. 1 բ., Ս. Բ. 1 բ., Գ. Խ. 1 բ., Ա. Բ. 1 բ., Ա. Մ. 1 բ., Ս. Մ 1 բ., Մ. Մ. 1 բ., Բ. Շ. 1 բ., Խ. Դ. 1 բ., Ս. Ս. 4 բ., Թ. Տ. 1 բ., Ե. Ֆ. 1 բ., Վ. Գ. 50 կ., Մ. Գ. 50 կ., Ա. Զ. 40 կ., Մ. Գ. 30 կ., Մ. Ա 20 կ., Մի ոմն 10 կ. Ընդամենը 14 բուրլի։

Ցաղոյ խմբագիր, թէկ նամակիս մէջ գրած եմ, որ չի գտնվի մի մարդ, որ իրան սիրան ապառաւանցնէ այսպէս մի նեղ մէջքցում, արդարեւ չը կայ մի այդպիսի մարդ, բայց մի և նոյն ժամանակ կան մարդիկ, որոնք նուէր հաւանգողին զարդացնում են իրանց մի քանի անտաշ խօսքերով, ինչպէս մեր պատանց պ. Օ. Մ-եանցի հետ։ Մենք դիմեցինք մեր Երեւանի ազգին, որպէս նարուտ մարդուն, խնդրելով նրանից իրեն կարեաց չափ օգնել մեր ասված եղբայրներին։ Մեր պարոնը փոխանակ նուէրելու, մի քանի անվայել խօսքերով մեր սիրտը կոտրեց։ Թէկ այսպիսի դէպքումն հազար այդպէս խօսքեր չեն կարող մի հալ սիրտը կտրել, բայց մի և նոյն ժամանակ խնդրում ենք այդ պարոնին սանձ դնել բերնին։ Զէ՞ր կամենում, թող չը նուիրեր։

Ա. Պ.

ՆԱՄԱԿ ԲԱՂՈՒԻՑ

30 յունիսի

«Պարզամերական ընկերութիւնը» զարձեալ օրհնում է տեսուչ իր երկնա զգոյշների համար։

Այս զարմանալի երեւոյթը ճշգրտութեամբ կրկնվում է ամենայն տարի։ Կարծես թէ տարբերգ ընկերութիւնը վճռակած է միշտ տեսչի մուրացկանութիւն անել։

Զարմանալին այն է, որ մինչև այսօր գտնված տեսուչներն էլ եղել են զանազան, անգործունեայ, տկար և այլ պակասութիւնների տէր մարդիկ, և չը նայելով այս ամենին, դարձեալ կարողացել են խաբել ամբողջ խորհրդին։ Եւ ինչպես է յաջողվում այդ անձանց խաբել խորհրդի անդամներին, որոնք տասն կամ քսան տարիներ պարապելով վաճառականութեամբ, հասել են ճարպիկութեան և խորամանկութեան վերին ծայրին։ Ես կարծում եմ, որ տեսուչների խաբեբայութեան յաջողութիւնը պէտք է բացատրել նորանով, որ խորհրդի անդամները վերոյիշեալ մեծ մասամբ անկիրթ և անզարգացած մարդիկ, ճարպիկ և խորամանկ են միայն վաճառականութեան մէջ, որպէս նորանց մասնագիտութիւնը, իսկ միւս գործերի մէջ, որոնց վրա մասնել անգամ գժուարանում են, ինչպէս մանկավարժութիւնը, նորանք արտայայտում են բոլորովին երեխայական հասկացողութիւնն և լիովին գրավվում են տեսչի կամ ուսուցչի զանազան բարձրը և սուտ խոստումներով։ Հաւատալի է արդեօք, որ տեսուչ Լ. Թուսիկեանցը իր վեց կամ եօթն ամիս անգործ և գաւառի ծառայութեան համար տացել է ընկերութեան գանձարանից չատ ավելի, քան թէ ամբողջ տարվայ առձիկը, բայց այդ սուտ է, երբ Թուսիկեանցը արդէն գնացել էր Բաղուից, և իր տանը նստած, հանգիստ և փառաւոր կերպով վայելում էր իր խորամանկութեան և տարազուութեան պտուղները, և ծանուկ ծիծաղում էր ընկերութեան անդամների թեթեւամտութեան և դիւրահաւատութեան վրա, նոր միայն հասկացաւ ընկերութեան խորհուրդը, որ ինքը խաբված է տեսչից և կորցրած է քաւականի մեծ գումար, բայց արդէն ուշ լինելով լռեց։

Հաւատաս մի և նոյն տեսակ վարվեց ընկերութեան հետ և պ. Սոսեփանեանը, այս տարվան տեսուչը, միայն այն զանազանութեամբ, որ Թուսիկեանը բնակվեց ուսումնարանում չորս կամ 6—7 ամիս, թէկ բոլորովին անօգուտ ուսումնարանին վերաբերեալ, իսկ Սոսեփանեանը այցելեց ընկերութեան ուսումնարանը միջին թիւով ընդամենը հինգ ամիս, թէկ նոյնպես բոլորովին անօգուտ, ինչպէս նորանք վկայում են և խորհրդի անդամները, իսկ մնացեալ միւս ուսումնական ամիսները նա զոհեց ըստ իր պարտականութեան զանազան քաղաքային և գիւղային արքունական ուսումնարանները այցելելուն և այդ բացակայութեան ժամանակ նա ստանում էր և տեսչի և ուսուցչի առձիկ։ Լսում ենք, որ պ. Մ. Պօղոսվանը առաջարկել է ընկերութեան իր ազատ ժամանակը ուսումնարանը կառավարելու համար, խորհուրդը նորան տուել է թէական պատասխան։

Ընկերութեան խորհուրդը հրաւիրում է պ. Դաւկասանին ուսումնարանի համար տեսուչ, իսկ եթէ սա չը յաջողվի, այն ժամանակ մտադիր է յանձնել ուսումնարանը նորա մէջ ուսուցիչ Աւագ Գրիգորեանին, «Սոխակի» հրատարակչին։ Մենք մեր կողմից ոչինչ չենք կարող ասել պ. Դաւկասանի մասին, չը ճանաչելով նորան, իսկ ինչ վերաբերում է պ. Գրիգորեանին, կասենք միայն, որ եթէ պատասխանը նա նշանակվեց տեսուչ, այն ժամանակ մենք «Ընկերութեան» խորհուրդ կը տայինք, և վերջապէս կը խնդրեինք չը հոգալ ամենին ազգային լուսաւորութեան վրա, որովհետեւ այդ տեսակ տեսուչների ձեռքով նա ոչ միայն չէ լուսաւորում ազգը, այլ աւելի ևս խաւարեցնում է ազգի խեղճ և տառապեալ մասնակցերին։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Голосъ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրին գրում են Կ. Պօլսից հետեւեալը։

Վերջին օրերում Կ. Պօլսի քրիստոնէական բաժինները հաղորդութեան տեսարան էին ներկայացնում. հեռաւոր և տարտանդ Հայաստանից պատգամ հասած մի քանի հազար երեխաներ իրանց համար հաց և բնակարան են փնտռում։ Ասում են, որ տարաբաղդ հրեխաների հիւր մնալու երկար ճանապարհորդութեան ժամանակ, որանց ուղեկցում էին մայրերը և քահանաները։ Հայրերը նրանց վաղուց թողել էին։ Նրանք խոստացել էին իրանց երեխաների ապրուստը հեռաւոր օտար երկիրներից ուղարկել, բայց ամիսներ միմեանց ետեւից անցնում էին և խոստացած օգնութիւնը չէր հասնում։ Ցուսահատված մայրերը և երեխաները վրդովել են Ճանապարհ ընկնել հայրերի շաղով մայրաքաղաքը, յուսալով այստեղ մի կտոր հաց գտնել։

Հէնց որ այս ողորմելի երեխաների առաջին խումբը հասաւ, հայոց պատրիարքը ներսէս Տրմանցը գանգատվեցաւ Տրաբիզ մայրաքաղաքի քրիստոնեայ բնակիչներին անպատասխան հիւրերին օգնելու համար։ Տարաբաղդ Ճանապարհորդների տեսքից շարժված՝ հայաբնակները ողորմելի ասում էին նրանց իրանց տները։ Երկի բոլոր եկեղեցիների մէջ մատնանշեցին կատարվեցան, որոնց ներսում էին հայաբնակները սգի հագուստներով։ Նրանց ընկերակցում էին խեղճ որբերը, իրանց բարեբարոյ հիւներին կպած և նրանց ձեռքերը սեղմելով։

Ի պատիւ հայաբնակների պէտք է ասել, որ նրանք բուռն մայրական քնչութեամբ վերաբերվեցին Հայաստանից եկած երեխաներին, որոնք չափազանց մաքուր էին հագնված։ Երեխաների մէջ բազմաթիւ շիկահերներ կան, Զարմանալի... Այդ դիակները կախված էին։ Նրանց կապանագոյն, արիւնալից երեսները զարհուրելի կերպով ալանդական էին։

Վարդիները, նախ քան կը կախէին ազատ հրացանամիդներին, կորտել էին նրանց քթերը և ականջները, և դուրս էին հանել ճանապարհի եզերքի վրա, որպէս օրինակ անցորդների համար *)։

Այդ սարսափելի տեսարանի աչքն, ա. ժերքը զարհուրելի արտմութիւնից կոկորդը սեղմված, ոչ մի խօսք չը կարողացաւ արտասանել։ Նա խեղդարի նման վազում էր մէկ դիակից դէպի միւսը, աշխատելով ճանաչել այս և այն ալանդական դիակների մէջ իր որդուն, իր սիրելի Ֆրանցին։

Նա վերջինն էր այն անբախտ կախվածների շարքում։

Այն ժամանակ բռնելով կատաղաբար իր աղջկայ ձեռքը ասաց՝

«Երբէք, լսում ես, Կրիստինա, երբէք չես տամանանց այս բարբարոսներից մէկի հետ։ Ես ապրի լաւ կը համարեմ քեզի մեռած տեսնել, քան թէ ամուսնացած մէկ գերմանացու հետ։

(Կը շարունակվի)

*) Այդ հրեշաւոր դէպքը ճշգրիտ պատմել է Ազգասէր։

Նրա դէմքը խոժոռվեցաւ։

«Ո՞ւրեմն են, գուցե սասիճանաւորը, ասացէք»

Նա չը պատասխանեց։

Բայց սեաւ հեծելազօրները մտնում էին արդէն և չդիպատում էին անտառները։

Օրը մթնում էր։ Ամենայն կողմից լսվում էր թնդանօթի որոտը։

Ցիկին ժերարը սարսափելով լսում էր թնդանօթի խրոխտալիր ճայթիւնը արձագանք էր զըտնում նորա սրտի մէջ։

Ցանկարծ նա նկատեց մարդկանց ստուերներ, որ անցնում էին գայլուկ կոչված բոյսերի միջով և մտնում էին զգուշութեամբ։

«Մայր, ասաց մի ձայն, մենք ենք։

—Մտէք չուտ, ասաց նա։

Քառասուն տղամարդ, մէկը միւսի ետեւից մըտան դաստակերքը։

Մի վայրկենում դիմադրութիւնը պատրաստ էր։

Նրքա ժողովեցին սայլեր, երկրագործական գործիքներ, մահճակալներ, կահկարասիք և չինեցին մի բարձր պատնէշ։ Նրքա փեղկերի և դռների մէջ ծակեր բաց արին։

Եւ նորքա սպասեցին։

Լուսինը դանդաղ կերպով բարձրանալով լեռների միջով, լուսաւորեց հովիտը հրեղէն գնդի նման։

Հեծելազօրները, որ ցրիւ էին եկած ազատ հրացանամիդների հրացանների արձակումից, կրկին միացան և չտապով դառնում էին դէպի դաստակերքը։

Սարսափելի, չատ սարսափելի յարձակումն բանվեցաւ։

Պատնէշը ոչնչացրին։ Ցակված դռները և փեղկերը թոյլ էին ընդդիմադրութեան համար։ Դաստակերքը յաջողական կը լինէր։ Ազատ հրացանամիդների պիտի ռնկնէին կատաղի թշնամիների ձեռքը։

Ցիկին ժերարը անվնասութեամբ ներկայ էր գտնվում, սպասում էր այդ մենամարտութեան վախճանին։

Այս կռիւը անօգուտ գտնելով, մի քանիսը առաջարկեցին անձնատուր լինել։

«Անձնատուր լինել, ազաղակեց կինը,—Երբէք, դուք ուրեմն չէք ճանաչում Նրանց։ Նրանք ոչ պատիւ, ոչ խիղճ ունին։ Նրանք ձեզ կը սպանեն։ Ոչ, ոչ, փախեք, այն կողմ, փախեք։

Կտրեց մի անգամ բաղեալ, Դա վերջերեց խուրձեր, նոցանից մի ջան չմնաց և վառեց։

«Փախեք, կրկնեց նա։

Եւ նա իր դաստակերքին կրակ տուաւ, այն դաստակերքին, ուր պարունակվում էին նորա բոլոր միջոցները, նորա քսան տարվայ աշխատանքի և խնայողութեան պտուղները։

Հրդեհը կանգնեցրեց թշնամուն։

Բայց ազատ հրացանամիդները, այդպիսի հերոսական գործով վիրված, մի քանի օրից յետոյ ընկան սեաւ հեծելազօրների ձեռքը։

Նրանց երկար ընդդիմադրութիւնից զարմանալով պրուսացիք հնարեցին մի անգութ վրէժխնդրութիւն։

Երբ Նրանք հեռացան Նեիվվերից, տիկին ժերարը, որ պատապարված էր Կրիստինայի մօտ, նորա հետ միասին վերադարձան դաստակերքը։

Երբ Նրանք մտնեցին էին՝

—Նայիր, ասաց Կրիստինան, սեղմվելով մօրը,—Ինչ է երեւում ճանապարհի մօտ։ Կարծես թէ գինուորներ են։ Պրուսացիք են, թէ ֆրանսիացիք։ Ինչպիսի անչարժութիւն։ Եւ ինչ զարմանալի բան, նրանց ոտները գետնին չեն կպչում։

Տիկին ժերարը գոչեցին սրտով, վախից լայնացեալ բիրերով, նայում էր ասանց պատասխանելու։

Ճշմարիտ, այդ ինչ կը նշանակէ։

Փոքր ինչ մտածելով, նրանք ճանաչեցին ազատ հրացանամիդների նշանագդեսները։

Նրանք չտապեցին։